Արձանագրություն N 3
«ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼ-22/16» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան

07-ը փետրվարի 2022թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝ (ԳԱՊ)
Նյութատեխնիկական ռեսուրսների կառավարման բաժնի ղեկավար՝ Ռուբեն Սիմոնյան,
գնահատող անդամներ՝
«ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» ծրագրի ֆինանսիստ՝ Դավիթ Զաքարյան
Դեղերի պլանավորման և կառավարման բաժնի ղեկավար՝ Արա Սողոմոնյան
հանձնաժողովի քարտուղար՝
Մերի Մկրտչյան

Օրակարգ

1. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
2. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼ-22/16» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակցից ընտրված մասնակցի որոշման մասին.
3. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
4. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.5. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին.
5. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

1. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Մ. Մկրտչյան)

1.1 Կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին կազմակերպված բանակցությանը մասնակցելու համար ներկայացավ միայն «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ ԴԵՂԱՏՈՒՆ» և «ԼԵՅԿՈ»ՍՊԸ-ների ներկայացուցիչը: Վարված բանակցության բանակցությանը ներկա մասնակիցների կողմից առաջարկվեցին հետևյալ նոր (նվազեցված) գները՝

Չ/հ	Ապրանքի անվանումը	Չ/մ	Քանակը	Նախահաշվայի և պլանավորած ընդհանուր գումարը ՀՀ դրամ	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների				
					Հ/հ	Անվանումները	Գնային առաջարկ /ՀՀ դրամ/		
							Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
2.	Միանգամյա օգտագործման ներարկիչ 2 մլ	հատ	50,000	800,000	1	«ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊԸ	792,500	0	792,500
4.	Միանգամյա օգտագործման ներարկիչ 5 մլ	հատ	350,000	5,565,000	1	«ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊԸ	5,547,500	0	5,547,500
5.	Միանգամյա օգտագործման ներարկիչ 10 մլ	հատ	100,000	2,100,000	1	«ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊԸ	2,480,500	0	2,480,500
6.	Միանգամյա օգտագործման ներարկիչ 20 մլ	հատ	50,000	1,500,000	1	«ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊԸ	1,742,500	0	1,742,500
7.	Սպիրտային խծուծ	հատ	1,100,000	9,240,000	1.	«ԼԵՅԿՈ» ՍՊԸ	6,966,666.67	1,393,333.33	8,360,000

Մնացած չափաբաժինների մասով մասնակցի կողմից հայտով առաջարկված գները թողնվեցին առանց փոփոխության:

1.2 Քանի որ «ԼԵՑԿՈ» ՍՊԸ-ի կողմից 1-ին և 3-րդ, իսկ «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊԸ-ն 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով հայտով առաջարկված գները գերազանցում են պատվիրատուի տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, իսկ բանակցության արդյունքում դրանք չնվազեցվեցին, ուստի հայտը նախագծող անձ-հանձնաժողովի անդամ Դ. Զաքարյանի կողմից առաջարկվեց **1-ին, 3-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների** մասով կիրառել ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի զ) պարբերությամբ նախատեսված հնարավորությունը և ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից, վերջինիս հետ կնքել պայմանագիր՝ գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու պայմանով:

Հիմք ընդունելով վերը նշված առաջարկը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել **07.02.2022թ.** նիստը՝ մինչև առաջարկի վերաբերյալ համապատասխան քննարկումների արդյունքում վերջնական որոշում կայացնելը:

1.3 Քննարկումների արդյունքում **10.02.2022թ.** կայացրած նիստում հաշվի առնելով ձեռքբերվող ապրանքների կարևորությունն ու անհրաժեշտությունը, գնահատող հանձնաժողովը որոշեց հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի զ) պարբերությունը **1-ին և 3-րդ չափաբաժինների մասով** ընտրված մասնակից ճանաչել **«ԼԵՑԿՈ» ՍՊԸ-ին, իսկ 5-րդ և 6-րդ** չափաբաժինների մասով՝ «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊԸ-ին և կնքել պայմանագիր գնման գինը գերազանցող մասով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսելու և դրա հիման վրա համաձայանագրեր կնքելու պայմանով:

2. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼ-22/16» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակցի որոշման մասին.

(Մ. Մկրտչյան)

2.1 **10.02.2022-ին՝** հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշեց, ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼ-22/16» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել՝ հետևյալ մասնակիցներին ***տես. Հավելված 1***

Հավելված 1

Չ/հ	Ապրանքի անվանումը	Չ/մ	Քանակը	Նախահաշվային պլանավորած ընդհանուր գումարը ՀՀ դրամ	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների					
					Հ/հ	Անվանումները	Գնային առաջարկ /ՀՀ դրամ/			Ընտրված մասնակից
							Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին	
1.	Միանգամյա օգտագործման ներարկիչ 1 մլ	հատ	200,000	3,200,000	1.	«ԼԵՑԿՈ» ՍՊԸ	5,000,000	0	5,000,000	«ԼԵՑԿՈ» ՍՊԸ
2.	Միանգամյա օգտագործման ներարկիչ 2 մլ	հատ	50,000	800,000	1.	«ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊԸ	792,500	0	792,500	«ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊԸ
					2.	«ԼԵՑԿՈ» ՍՊԸ	800,000	0	800,000	
3.	Միանգամյա օգտագործման ներարկիչ 3 մլ	հատ	350,000	4,900,000	1.	«ԼԵՑԿՈ» ՍՊԸ	5,595,000	0	5,600,000	«ԼԵՑԿՈ» ՍՊԸ
4.	Միանգամյա օգտագործման ներարկիչ 5 մլ	հատ	350,000	5,565,000	1.	«ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊԸ	5,547,500	0	5,547,500	«ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊԸ
					2.	«ԼԵՑԿՈ» ՍՊԸ	5,600,000	0	5,600,000	
5.	Միանգամյա օգտագործման ներարկիչ 10 մլ	հատ	100,000	2,100,000	1.	«ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊԸ	2,480,500	0	2,480,500	«ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊԸ
					2.	«ԼԵՑԿՈ» ՍՊԸ	2,500,000	0	2,500,000	
6.	Միանգամյա օգտագործման ներարկիչ 20 մլ	հատ	50,000	1,500,000	1.	«ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊԸ	1,742,500	0	1,742,500	«ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊԸ
					2.	«ԼԵՑԿՈ» ՍՊԸ	1,750,000	0	1,750,000	
7.	Սպիրտային խծուծ	հատ	1,100,000	9 240 000	1.	«ԼԵՑԿՈ» ՍՊԸ	6,966,666.67	1,393,333.33	8,360,000	«ԼԵՑԿՈ» ՍՊԸ

2.2 Գնահատող հանձնաժողովը հաստատեց «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼ-22/16» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

2.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանվել է 5 օրացուցային օր:

2.4 Պայմանագիր կնքելու նպատակով անգործության ժամկետը լրանալուց հետո ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել կից գրությամբ պայմանագրի նախագիծը երկու օրինակից, ինչպես նաև որակավորման ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիր և կից վճարման պահանջագիր), պայմանագրի կատարման ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիր և կից վճարման պահանջագիր):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0:

3. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Մ.Մկրտչյան)

3.1 «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼ-22/16» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Մ. Մկրտչյան)

4.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Մկրտչյան)

5.1 «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԳԼ-22/16» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ն, «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի շենքում, ք. Երևան, Աճառյան 2, 212 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)		Ռ. Սիմոնյան
Գնահատող		Դ. Զաքարյան
Գնահատող		Ա. Սողոմոնյան
Հանձնաժողովի քարտուղար՝		Մ. Մկրտչյան